## 24. ԴՈ̈ՒԼԳՑԱՐԻ՞Ն ՏՂԱՆ

Մին թաքավըրէր ո̈ւրա̈ն էրգյիրը շոռ ար կյամ. թա տըեսնա հի՞նչ կա, հի՞նչ չի կա, ժողովուրթը հու՞նց ըն ապրում, հի՞նչ ըն անում։ Էտ թաքավըրը վըեր շոռ կյա̈լավ տո̈ւս ա կյամ մին չէն, տըեղեն գո̈ւղգյա̈րին տղէն գո̈ւշմո̈ւննէն շատ ը՝ խնո̈ւմ, յիրա̈ն շառ ըն տինո̈ւմ, թաքավըրէրին ասում.—Տա շատ փիս, խաթալու մարթ ա, տրա տըեղը տո̈ւրմա̈ն ա։ Թաքավըրէրն էտ խուսկէրքէն հըվատում ա, տրան փռնել տամ, ղարկում տո̈ւրմա̈ն։

Շատ վըեր անց ա կէնում, թաքավըրը մըծանում ա։ Ո̈ւրա̈ն էլ մէնակ մին տղա յա ինո̈ւմ, տրան ասում ա՝ դէ իմ հայ-հայըս քյիցալ ա, մնացալ ա վայ-վայըս, էքյո̈նծ-ա̈լճր մըռնըլական ըմ, տո̈ւս էք էրգյիրը շոռ էք, տըես՝ հի՞նչ կա, հի՞նչ չի կա, կառավարէլը կուճուր-կուճուր սովըէրէ, վըեր իմ մըռնէլանըս էտը թո̈ւրղան չա̈շմիշ չինիս։

Թաքավըրէրին տղան շորէրը փոխում ա, վըեր ճինա̈նչին վուշ, տո̈ւս կյամ սաղ էրգյիրը շոռ կյամ, քյինա̈մ հասնում տո̈ւրմա̈ն, տըեսնում նըստած մարթիքյ լոխ օրախ, ըանլիս-խուանլիս, մէնակ մին մարթ կլըխը կախ ըրած, տխուր, օնքըէրն ո̈ւրո̈ւր տուվլած։ Տրան մուտանում ա, հըրցընում, թա՝ դա̈րդըտ հինչ ա՞։ Տա թա՝ էս էհինչ չէնին գո̈ւղգյա̈րին տղան ըմ, էսքան տարի յա, վըեր էս թաքավըրէրին հըրամանավ նստած, բայց գյո̈ւղո̈ւմ չըմ, թա հի՞նչու հետե։ Թաքավըրէրին տղան դա̈սատին տրա անումը, փամիլը, ա̈դրէսը կյիրում ա, յոր օնում։ Քյինա̈մ ա հորը կոշտը, թա՝ ա՛ հա̈ր,

սաղ երգյիրը շոռ ըմ եկալ, ամմեն տըեղ տըեսալ ըմ, ամմին հինչ ճինանչըլ, լոխ ծիրա̈ն տըեղըն ա, մենակ մին պեն լավ չար։ Հա̈րը հըրցընում ա, թա էտ հի՞նչ պեն ա, տղան թա՝ քյեցե տո̈ւրմա̈ն, փոնըված մարթիքյը լոխ օրախ ին, մենակ մին մարթու ումբըմաչյան աղուն կա̈թում ար. հըցըրե, թա դա̈րդըտ հինչ ա՞, տա ասեց՝ գյուդում չըմ, թա թաքավըրերն ինձ հինչո՞ւ հետե յա նըստըցընել տուվալ. եռնան էլ թա՝ ա՛ հա̈ր, էն մարթը վըեչ մին մեխկ չօնե, տու առանց քննելի, առանց ամմեն հինչ գյիդա̈լի սուտասիգյ մարթուցը հըվատալ ըս, նրան նըստըցընել տուվալ. Նա էսհինչ չենին դո̈ւկյա̈րին տղան ա, մըեստըտ կինի, զուր տըեղան ա նստած, ճեյլի հրաման տո, պեց թողեն, քյինա̈ ծիրանց տոն, մեխկ ա, կնգատար-խուխատար ա։

Թաքավըրերը ծիրա̈ն հրամանն ա ղարկում, էտ դո̈ւկյա̈րին տղեն տո̈ւրմա̈ն ըղադել տամ։ Տա վըեր մին շատ աղղուն մարթ ա ինո̈ւմ, ծին լյիհա̈րա̈ծ, տոն քյինա̈լիս վախտը եշում ա, տըեսանում միրըլըմներեն մին զըեռ սո̈ւրո̈ւ քյարըվան կապած, հըղցեն մաչ տըեղավը քյինա̈մ ըն։ Տա հղեն փոխում ա, վըեր միրըլըմններեն վնաս չի տա։ Տհանցա մինը ըռըչկտըրողան քյինա̈մ ա տրան հանում, էրկու թըև տամ ծիրա̈ն, ասում.—Վըեր տու տի խըղճըմըտանքավ մարթ ըս, եր կալ, քշտիտ պահե. վըեր նըեղ տըեղ ինգյիս, էտ թըևերն ծիրո̈ւր կըքսիս, մունք հիշտեղ էլ ինինքյ, կյիլա̈կան ընք քեզ հըսնենքյ։ Տա թըևերը յոր ա օնում, քյինա̈մ։ Մին քանի օրան եսը էտ մարթը հըսնում ա ծիրա̈նց տոն։

Ուրերան մին օր թաքավըրերեն տղան եռ ա տըեռնում, հորն ասում՝ ինձեռե էսհինչ երգյիրին օխտը դո̈վին քուրը պիտի օղեա։ Թաքավըրերը թա՝ ա՛ վըերըթի, տու գյո̈ւդո̈ւմ ըս, վըեր օխտը դո̈վերը մըեզ խաթիրավ ախճիգյ չըն տալ, զոռավ էլ կարել չընք պիրինքյ։ Իրեք հետե կռվալ ընք, իրեք հետե յել հախտըվալ, մեհենգյ վըեր կռվենքյ, էլլա յընք հըխտըվըլական։ Տղան թա՝ գյո̈ւդո̈ւմ չըմ, վըեր օխտը դո̈վին քուրն ինձեռե օղըես վուչ, քյիննա̈կան ըմ ինձ ըսպանեմ։ Թաքավըրերը մտածում ա, մադար-գյո̈ւդա̈ր մին տղա օնեմ, կըքյինա̈ կլո̈խը մին պեն պիրի, էս հլիվուր հա̈լիս կլեսս կրակ վըեր ածե։ Տա մին օր ուրան սաղ երգյիրին ժուղովուրթեն հըվաքում ա մին մեյդան տըեղ, օղում ա վըեր մըսլըհաթ անե, թա տըեսնա՝ հինչ անեն։ Թաքավըրերը ժուղովուրթեն ասում ա.— Մադար-գյո̈ւդա̈ր մին տղա օնեմ, վըեր էտ պենն անեմ վուչ, կլո̈խը օյին ա պիրիլա̈կան, դո̈վերը խաթիրավ մըեզ ախճիգյ չըն տալ, զոռա̈վ էլ կարել չընք խլինքյ, գյո̈ւդո̈ւմ չըմ հինչ անենքյ,

էլլա թա̈լի վըեր կոն աննենքյ, տրանավ ումեդ պա՞հենքյ, վըեր ախ-ճիգյը կըկարենքյ պիրինքյ։ Էտ մարթուցը նհետ դո̈ւլգյա̈րին տղան էլ ա ինո̈ւմ եկած։ Տա թաքավըրերեն տղեն դա̈ստին ճինա̈նչո̈ւմ ա, օղում ա նրա ըրած լիվութունեն հետե մին լիվոթուն էլ ինքյն անե։ Ետ ա տըեռնում թաքավըրերեն թա՝ կոն-պեն հարկավըեր չի, ես տղեն նհետ կըքյինա̈մ, ախճիգյն օղեմ, պիրեմ։ Ըստեղաս-ըն-դեղան ասում ըն կարել չըս։ Դո̈ւլգյա̈րին տղան թա՝ էտ ծեր կործը չի։ Թաքավըրերը մտկումն ասում ա.—Հա̈լըա̈թ սրանում մին պեն, մին հինա̈ր կա, վըեր ռիսկ ա անում։ Ետ ա տըեռնում, թա մա-դար-գյո̈ղա̈ր էս մին տղան ա իլա̈ծըս, յա̈նի կըկարե՞ս էտ պենն անես. թա կըկարես, տղաս քըղնը՞հետ ղարկեմ։ Տա թա ըրխըյին կաց, տղետ մին մազն էլլա ծովել չի։

Էքյսը դո̈ւլգյա̈րին տղան նան թաքավըրերեն տղան հղե յըն ինո̈ւմ, քյինա̈մ տո̈ւս կյամ օխտը դո̈վերեն պալատը։ Նի յըն մննում, տըեսնում ախպըերքը տանը չըն, տո̈ւս ըն եկալ, մնացալ ըն մարն ու ախճիգյը։ Ախճիգյը տղեն վըեր տըեսնում ա, դա̈ստին սիրահարվում ա։ Մարն ալ թա՝ ճելլ ըրեքյ ըստեղաս տո̈ւս եկեքյ, խոխեքյըս տանը չըն, քյեցալ ըն վըերս, էս սհաթըս կյիլա̈կան ըն, վըեր ծըեղ ըստըեղ տըեսնան, պըտըռ-պատառ ըն ըննական։ Դո̈ւլգյա̈րին տղան թա՝ պա եկալ ընք խստի պենու հետե, էս էլ էս-հինչ եղգյիրին թաքավըրերեն տղան ա։ Դո̈ւվըրերեն մարը թա՝ հա̈լա̈ ճուխտեքան նի մըտեքյ մըեծ տաշտին տակը, ընդեղ կյողըը կա-ցեքյ, ախպըերքը կյա̈ն, ես նըհըտնեն մալըհաթ անեմ, տըեսնանք հի՞նչ ըն ասում։

Դո̈ւվերը շատ յըտանում չըն, կյամ ըն, հենց լի՞ա̈ փա̈լա̈քյա̈-նավը պիցիրա̈նում ըն, թա՝ մըրթավըետ ա կյամ։ Մարը ծծերը դո̈ւշերան տո̈ւս ա օնում կախ-կախ անում, տղորանցը թա՝ էս կաթնը ծըեղ հարամ ինի, վըեր ըստըեղ ա̈րո̈ւն վըեր ածեքյ։ Ասում ա, տաշտը պիցըրցընում, դո̈ւլգյա̈րին տղան ան թաքավըրերեն տղան տական տո̈ւս ըն կյամ։ Դո̈ւլգյա̈րին տղան առանց էրկյան-պերակ խոսելի ասում ա՝ եկալ ընք ծըեր քուրն էս տղեն հետե օղենքյ, սա էսհինչ թաքավըրերեն տղան ա։ Ախպորցը մըեծը թա՝ ըռաչիտ իրեք պայման ըմ տինո̈ւմ, վըեր կըրեցեր իրեքան էլ կը-դարես, ախճիգյը տամ ընք, վըեր կըրեցեր վուչ, սուսուփուս եր կացեքյ, քյեցեքյ։ Մին պայմանն էն ա, վըեր մըեր օխտը ախպոր-ցը լոխճինին նհետ կընդ-կընդ կոխը պիտի կենաս, վըեր քըցիս, եռնան էլ քյիննա̈կան ընք վըերս, կյանք, հիշքան վըեր մունք ստենքյ, էնքան էլ տու պիտի ստես. վերջին պայմանն էլ էն ա,

վըեր մին չուվալ կորեկ, մինդյել մին չուվալ ցորեն ո՜ւրո՜ւր նհետ խըռնըլական ընք, պիտի մին քշերում ո՜ւրո՜ւր անա լոխ ճոկես, ամմեն մինն ո՜ւրա՜ն չուվալեն մաշն ածես։ Դո՜նկգյա՜րին տղան ասում ա.—Կոխլը կընալիս կարող ըք օխտը ախպըրքը մին անգյո՜ն անց կենաք, ես՝ մին անգյո՜ն, ծըեր օխտեն բիրադի վըեր կըքըցիմ, ծըեր լոխճիննին վըերսը մենակ կօւեմ, խառնած ցորեննան կորեկն էլ մին քշերումը ճոկեմ, ածեմ ամեքյա ըսրանց տըեղը։

Էքյսի օրը կոխլ ըն կենում, դո՜նկգյա՜րին տղան լոխճիննին վըեր ա քցո՜ւմ։ Վըեր քյինա՜մ ըն վըերս, Թաքավըերեն տղան տանն ա մնամ։ Դո՜նվերեն մարը տրան ասում ա՝ քյինա՜ սաղ հայաթը, բախճան, ումըղնեն շոռ եք, ամմեն հինչ տըես, ձինա՜նչի, մենակ էսհինչ օթաղը նի չի մննես։ Թաքավըերեն տղան ամմեն տըեղ շօռ ա կյամ, ամմեն հինչ տըեսնում, պըռավեն ասած ութաղեն կոխկավն անց կընալիս ասում ա նի յըմ մննական հալա՜ մին տըեսնամ ըստըե՞ղ հինչ կա։ Նի յա մննում, թա չէ, տըեսնում ա մին մըեծ, աժդահա, սիպտակ դո՜վ ժինջիլա՜վ սո՜ւթնա՜ն կապած, մին կոռն աղ էլ ըռաշին, տաշտակը ճիրա՜վ լիգյը, խիլա՜ հեռու տիրա՜ծ։ Էտ դո՜վը թա՝ պա՛հ, ես քե մատաղ, էս ա քանի օր ա օխտը ախպըրեքն ինձ փըռնած, ըստըեղ կըպոտած, ըռաշիս էլ մենակ էս աղն ըն տիրալ, վըեր լո՜ւզ տամ, սրանավ ապրեմ, տըշտակեն ճուրն էլ հըռըցըրալ ըն, վըեր կարեմ վուչ խմեմ, աղը լո՜ւզիմ, ծըռավեմ, ճիրին եշեմ, հա՜լվիմ։ Մին թիքյա՜ էտ տաշտակը մուտըցըրու, լիհա՜ պռոշըս թրջիմ։ Թաքավըերեն տղան թա՝ պա տաշտակը ծանդր ա, կարել չըմ տըեղան տո՜ւրո՜ւր տամ։ Դո՜վը թա՝ վըեչինչ, լիհա՜ զոռավ, տըեղան քըշըքսի ընելավ մխըրե մուտըցըրու։ Տա վըեր քըշըքըսի ընելավ, դըրթըղարթու ընելավ մուտըցընում ա, սիպտակ դո՜վը վիզը մըեկնում ա, պռոշը զոռավ տըշտակեն հըռցընում, ճո՜ւրը լոխ ծծում, խմում, խմում, օռչում, ումըղանում, վիզը թափ տամ, ծիքյ տամ ժինջիլը կտրում, տո՜նա կյամ օխտը դո՜վին քուրը կյուղանում, տանում։ Դո՜վերը ծմական կյամ ըն, մարը թա՝ պա խատի պեն ա պըտահալ։ Ախպերքը կըռքընըրնեն ո՜ւրո՜ւր ըն տամ, դո՜նկգյա՜րին տղան թա՝ ըրխըյին կացեքյ, նահանք հա՜լա հղեննի կինին, տըեղ հասծ չըն ինիլ. լիհա՜ հրսանեքյը նստած, ես տըեղ կըհըսնեմ, ախճիգյը ծըեռքան խլիմ, պիրիմ։ Դո՜վերն ասում ըն եկալ ա, վըեր մըեր քուրը տանե, տու՜վալ չընք, ուզեցալ ա կռվավ տանե, օխտը ախպըրեր չիրա յընք տըեռալ, զոռավ, մին թահրա՜վ փռնալ, կըպոտալ, տու մենակ հո՞ւնց պիտի նրա նհետ կըռն անես։ Դո՜նկգյա՜րին տղան թա՝ ըրխը-

յին կացնեքյ, չերանը իրեք օր ես կարող ըմ ծըեր քուրը եռ պիրիմ։ Վըեր պիրիմվուչ, Թաքավըերեն տղան ծըեր քշտին ա. Նրանա ետը տուք ըք գյօնդօմ, ծըեր սովխատը։

Դօնկգյօրին տղան հղե յա ինօմ, քյինձմ։ Շատ ա քյինձմ, Թա խրեգյ, եչում ա, տըեսնում մին մարթ վար ընելիս, պըտահած ծառերն էլ լոխ պըկոտում ա, տեն ածում, վարեն առաչը Թիմիզզընում։ Վըեր մուտանում ա, էտ վար անողը հըրցընում ա, Թա հիշտեղ ը՞ս քյինձմ, տա Թա քյինձմ ըմ սիպտակ դըվին ծըեռքան օխտը դօնվերեն քուվերն ըզադեմ, պիրիմ էսհինչ Թաքավըերեն տղեն հետե։ Էտ մարթը Թա՝ ես էլ ըմ կյամ։ Դօնկգյօրին տղան ասում ա՝ քյինձնք։ Բիրձդի հղե յըն ինօմ, քյինձմ։ Խիլլձ վըեր հըռանում ըն, եչում ըն, տըեսնում մին մարթ արխեն ինգյած, ճօւր ա խմում, արխը ցըմըքցընում, ետնան էլ պերանը տեմ ըրած պահում, վըեր էլլա կյա։ Էտ մարթը տահանց վըեր տըեսնում ա հրցընում ա, Թա հիշտե՞ղ ըք քյինձմ, տահանք Թա՝ քյինձմ ընք օխտը դըվին քուրը սիպտակ դըվին ծըեռքան խլինքյ, պիրինքյ էսհինչ Թաքավըերեն տղեն հետե։ Տա ասում ա.—Վըեր քյինձմ ըք, ես էլ ըմ կյամ։ Տահանք Թա՝ քյինձնք։

Իրեքան բիրձդի քյինձմ ըն, տըեսնում հըսանեքյը լիհա նոր նստած։ Վըեր նի յըն մննում հըսընքատոնը, տահանց տանում ըն մին լյավ տըեղ նստըցընում։ Դօնկգյօրին տղան ասում ա.— Թուղեցեքյ մունք հառհնեն նան փսեն քշտին նստենքյ։ Տահանց տանում են հառհնեն նան փսեն կօխկեն նստըցընում։ Հառհնը դօնկգյօրին տղեն դաստին ճինձնչօմ ա, կլխու վըա ինգյօմ, վըեր մօրձն եռ տնեյի հետե յըն եկալ։ Հըսընքեն Թօնդ վախտը դօնկգյօրին տղան սիպտակ դըվին ծըեռքան փռնում ա, հլըռում, էն էրկու մարթն էլ մուտանում ըն, էն մին ծըեռքը հլըռում, հառհնն էլ կյամ ա, կլխան փըռնում, կոըցընում, չուրսեքան սիպտակ դըվին մաչկեն նստում ըն, պիրօմ մինչև օխտը դօնվերեն վըեղեն սահմանը, սիպտակ դըվին պեց Թողում, մօրձնք ախճիգյը յոր օնում, քյինձմ։

Մին քանի օրան ետը դօնկգյօրին տղան քյինձմ ա օխտը դօնվերեն տիրած էրկուինքի պայմանը կըդարում, իրեքինչինումը տիժիրձնում ա. միրչեմնեն Թըևերը տօւս ա օնում, մօրմօր քսօմ, միրչիմնեն լոխ կյամ ըն, մին քչերումը կօրեկը նան ցօրենը ճոկում, ածում ամեքյա մօրձնց չուվալը, եռ տըեռնում, քյինձմ։ Քշըրհանան դօնգյարին տղան կյամ ա, տըեսնում կօրեկը նան ցօրենը լոխ ճոկած։ Զուվըլնեն պատնըյեր ցեց ա տինօմ, քյինձմ Թաքավըերեն տղեն փակում, յոր օնում, տանում մօրձն եռգյիրը։